ԶՈՐԱՀԱՎԱՔԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑՈՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԴԻՄԵԼ Է ԻՐԱՎԱՍՈՒ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻՆ

01.10.2020 18:11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը 2020թ. հոկտեմբերի 1-ին պաշտոնական պարզաբանում ստանալու մասին դիմում է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարին և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին:

Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ընդհանուր զորահավաքի շրջանակներում ծանուցագրեր են ստացել և ռազմական գործողություններին մասնակցելու նպատակով սահման են մեկնել աշխատող անձինք, որպիսի պարագայում առաջանում են նրանց աշխատանքային հարաբերությունների շարունակմանն առնչվող իրավական հարցեր:

Այդ հարցերից հիմնականը հանգում է հետևյալին՝ արդյոք զորահավաքին մասնակցող անձանց պետք է տրամադրվի պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար արձակուրդ և եթե այո, ապա արդյոք նրանք իրավունք ունեն ստանալ վարձատրություն արձակուրդի ընթացքում:

Նշված հարաբերությունը հստակ կարգավորված չէ, սակայն կարգավորված է զինվորական վարժանքին կամ զորավարժությանը մասնակցելու ընթացքում քաղաքացուն պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար սահմանված արձակուրդ տրամադրելու, նրա աշխատատեղը (պաշտոնը) և միջին աշխատավարձը պահպանելու (վճարելու) հարաբերությունը: Այս դեպքում, ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 2-րդ մասի պահանջների, միջին աշխատավարձը վճարում է պետական մարմինը:

ՀՀ փաստաբանների պալատն առաջարկել է զորահավաքի միջոցով ռազմական գործողություններին մասնակցելու նպատակով սահման մեկնած անձանց հետ հարաբերություններում ղեկավարվել նույն մոտեցմամբ, այսինքն՝ պահպանել աշխատողի աշխատատեղը, իսկ միջին աշխատավարձի վճարումն ապահովել պետական մարմնի միջոցով:

Հարգանքով՝

ՀՀ փաստաբանների պալատի

մամուլի ծառայություն

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })